

12.10.2009թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ.Ամանյան, Ա.Աղազարյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, (*Խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Կ.Կույունջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մանկական քանակակազմի, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ» Ձև թիվ Պ-1/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և դրա լրացման հրահանգին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին» Ձև թիվ Պ-2/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ» Ձև թիվ Պ-3/հ (եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և դրա լրացման հրահանգին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» Ձև թիվ Պ-4/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին» հավանություն տալու և «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի օգոստոսի 12-ի թիվ 24-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող` Ն.Բաղդասարյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2009 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին իրականացված համաաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը կարիքավոր տնային տնտեսությունների վրա հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան ՄԱԿ-ի Պարենի համաաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող` Գ. Մարտիրոսովա /

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Լատվիայի Ռիգա քաղաքում 03.09-07.09.2009թ. տեղի ունեցած «Առողջությունը, հիվանդացությունը և մահացությունը 21-րդ դարում, նոր ժամանակաշրջան» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող` Կ.Կույունջյան/

4. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ`6, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մանկական քանակակազմի, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ» Ձև թիվ Պ-1/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և դրա լրացման հրահանգին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին» Ձև թիվ Պ-2/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ» Ձև թիվ Պ-3/հ (եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և դրա լրացման հրահանգին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» Ձև թիվ Պ-4/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին» հավանություն տալու և «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի օգոստոսի 12-ի թիվ 24-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մանկական քանակակազմի, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ» Ձև թիվ Պ-1/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և դրա լրացման հրահանգին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին» Ձև թիվ Պ-2/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ» Ձև թիվ Պ-3/հ (եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և դրա լրացման հրահանգին», «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» Ձև թիվ Պ-4/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին» և ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի օգոստոսի 12-ի թիվ 24-Ա որոշումը:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին իրականացված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը կարիքավոր տնային տնտեսությունների վրա հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսովա /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին իրականացված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը կարիքավոր տնային տնտեսությունների վրա հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների

իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու
և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Լատվիայի Ռիգա քաղաքում 03.09-07.09.2009թ. տեղի ունեցած «Առողջությունը, հիվանդացությունը և մահացությունը 21-րդ դարում, նոր ժամանակաշրջան» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Կ.Կույունջյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ